ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 139 – Ա

15 մարտի 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N 201-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի և «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2020 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային տարահանման հանձնաժողովի կազմը, մարզային տարահանման հանձնաժողովի աշխատանքային խմբերի կազմերն ու կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի հուլիսի 30-ի N 26-Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 201-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետով հաստատված հավելված N 1-ը՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային տարահանման հանձնաժողովի կազմը, շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 1-ի:

15.03.2021

X

ՄԱՐԶՊԵՏ՝

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Ք. Գավառ